ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ՄՀԵՐ ԲԵՋԱՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Բեջանյան,

ի պատասխան Ձեր 20.03.2026թ. գրության՝ տեղեկացվում է, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ Երևանի վարչական տարածքում (Երևան քաղաքում քաղաքաշինական ծրագրերի իրականացման նպատակով տրամադրված թույլտվությունների համար) բազմաբնակարան բնակելի շենքերի, համալիրների շինարարության թույլտվությունների, շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետների երկարաձգման, ինչպես նաև նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) կազմելու համար գանձվող տեղական տուրքերի և վճարների նկատմամբ արտոնությունները սահմանված են Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան համայնքում 2026 թվականի տեղական տուրքերի գծով արտոնություններ սահմանելու մասին» N 481-Ն, «Երևան համայնքում 2026 թվականի տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» N 482-Ն որոշումներով, իսկ 2026 թվականի տեղական տուրքերի դրույքաչափերը սահմանված են Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան համայնքում տեղական տուրքերի 2026 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին» N 458-Ն որոշմամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ